


ՄԱՐՏԱՐՈՒԷՏԸ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԳՄԱՆ ՄԻՋՈՑ

Posted on April 14, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



Թղթակցութիւն Սան Տիեկօ – Պէյրուք Հեռախօսով, Ապրիլ 2014

Շաբաթ, Ապրիլ 19-ին, Սան Տիեկոյի (Գալիֆորնիա) Միրամար պողոտային վրայ գտնուող «Հայկ-Բել» մարտարուեստի դպրոցը պիտի կազմակերպէ Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման ու ճանաչման նուիրուած ցուցադրական կարեւոր երեկոյ մը:



Թղթակցութիւն Սան Տիեկօ – Պէյրուք Հեռախօսով, Ապրիլ 2014

Շաբաթ, Ապրիլ 19-ին, Սան Տիեկոյի (Գալիֆորնիա) Միրամար պողոտային վրայ գտնուող «Հայկ-Բել» մարտարուեստի դպրոցը պիտի կազմակերպէ Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման ու ճանաչման նուիրուած ցուցադրական կարեւոր երեկոյ մը:



«Մեծ Վարպետ» Հայկ Յարութիւնեան, որ երկար տարիներ եղած է Հայ «Սեւ Գօտի»ներու Միջազգային Միութեան ներկայացուցիչը Մայր Հայրենիքի մէջ՝ 2003 թուականին, Լոս Անճելըսի մէջ հիմնած է «Հայկ-Բել» մարտարուեստի ակումբը: Անոր կ'օգնեն երկու «Սեւ Գօտի»աւոր վարպետներ՝ Սեւադա Նորվուզեան եւ Միքայէլ Նազլիքեան: Դպրոցը մասնագիտացած է հայ թէ հայասեր նոր սերունդին սորվեցնելու “Թայ Նէ”ի, “Քոնկ Ֆու”ի, “Մուլայ Թայ”ի եւ այլ արեւելեան մարտարուեստի գաղտնիքները, հեռու պահելով զանոնք վատ բարքերէ եւ դաստիարակելով մարդկային եւ հայաշունչ ոգիով:

–“Այս հայրենասիրական, արեւելեան մարտարուեստի իրադարձութեան խորհրդանիշը պիտի ըլլայ՝ «Հաստատե՛, ընդունե՛, ճանչցի՛ր որ Թուրքիան յանցաւոր է Հայոց Յեղասպանութեան մէջ»: Երկժամեայ հանդիսութեան ընթացքին ոչ միայն դասախօսութիւն տեղի պիտի ունենայ ինքնապաշտպանութեան մասին Սան Տիեկոյի համալսարանի ուսանողներուն, հայ եկեղեցւոյ երիտասարդ անդամներուն, այլեւ մարզիչ Միքայէլ Նազլիքեան պիտի պատմէ Հայոց Յեղասպանութեան մասին ոչ-հայ քաղաքայիններուն, համայնքի անդամներուն: Մենք թողցիկներ դրօշակներ, նկարներ, շապիկներ պատրաստեցինք այս նշանակալից իրադարձութեան համար, մինչ գլխաւոր մարզիչ Սեւադա Նորվուզեան կ'աշխատի երիտասարդ նոր սերունդի անդամներուն հետ, անոնց բացատրելով միտքի եւ առողջ մարմնի միաձուլումը՝ հայրենասիրութեան մէջ...”- հեռախօսով մեզի փոխանցեց «Մեծ Վարպետ» Հայկ Յարութիւնեան՝ Սան Տիեկոյէն: Յիշեցնենք որ ան տարիներ առաջ եղած է Սփիւռքի “մայրաքաղաք” Պէյրուքի մէջ, մասնակցելով շարք մը ցուցադրական ելոյթներու:



Կը շնորհաւորենք այս խիզախ քայլը, մեր ընթերցողներուն փոխանցելով **19 Ապրիլ 2014**-ին տեղի ունենալիք հայկական եւ արեւելեան մարտարուեստով ոգեկոչելու իրադարձութեան մանրամասները:

